Տվյալ պարագայում ներկայացվել է հայց՝ թիվ «ՏԱՎՈՒՇ-ՁՕԸ-ԳՀԱՊՁԲ-25/09-2» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը ենթակա է բավարարման, գործը քննվել է գրավոր ընթացակարգով, որպիսի պայմաններում Դատարանը եզրահանգում է, որ սույն գործով որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 100,000.00 ՀՀ դրամը, հետևաբար՝ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՁԻ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Տավուշ» ջրօգտագործողների ընկերության՝ թիվ «ՏԱՎՈՒՇ-ՁՕԸ-ԳՀԱՊՁԲ-25/09-2» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2025թ. մարտի 10-ին կնքված թիվ «ՏԱՎՈՒՇ-ՁՕԸ-ԳՀԱՊՁԲ-25/09-2» ծածկագրով պայմանագրի «Տավուշ» ջրօգտագործողների ընկերության կողմից 2025թ. մարտի 27-ի միակողմանի լուծումը:

«Տավուշ» ջրօգտագործողների ընկերությունից հօգուտ ««ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՁԻ» ՍՊ ընկերության բռնագանձել 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Տավուշ» ջրօգտագործողների ընկերությունից հօգուտ «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՁԻ» ՍՊ ընկերության բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am